ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.Հ.355-Ա, 356-Ա ԵՎ 357-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 24-ի «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» հ.հ.355-Ա, 356-Ա և 357-Ա որոշումների մեջ «250.8քմ», «250.8քմ» և «326.84քմ» թվերը համապատասխանաբար փոխարինել «217.65քմ», «221.07քմ» և «271.57քմ» թվերով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.Հ.355-Ա, 356-Ա ԵՎ 357-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 24-ի հ.հ.355-Ա, 356-Ա և 357-Ա որոշումներով թույլատրվել էր Գարի Սարկիսյանին և Կարինե Մակարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 22.06.2007թ. հ.2190820 վկայական/ Գ-1 թաղամասի հ.8/5 հասցեում գտնվող 500.3քմ մակերեսով հողամասից 250.8քմ, Արտյոմ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.06.2014թ. հ.11062014-01-0102 վկայական/ Գ-1 թաղամասի հ.20/5 հասցեում գտնվող 500.3քմ մակերեսով հողամասից 250.8քմ և Արման Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.05.2014թ. հ.08052014-01-0239 վկայական/ Գ-1 թաղամասի հ.6/14 հասցեում գտնվող 560.0քմ մակերեսով հողամասից 326.84քմ մակերեսով հողամասերը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համարժեք հողամասերի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ փոխանակվող հատվածները գտնվել են անկանոն կառուցապատման գոտում և մասնատված ուրվագծի պատճառով հնարավոր չի եղել արդյունավետ օգտագործել: Նկատի ունենալով, որ նշված հատվածում իրականացվել են քաղաքաշինական իրավիճակի հստակեցման աշխատանքներ, մասնավորապես տարածքում առկա են եղել հողամասերի կառուցապատման, վերակառուցման հետ կապված հարցեր, ապա նպատակահարմար է գտնվել առաջարկել տվյալ հողամասերի սեփականատերերին կատարել հողամասերի փոխանակում:

Ներկայումս նշված հասցեներում գտնվող տարածքների փաստացի իրավիճակի և 2014-2015թ.թ. ընթացքում կադաստրային քարտեզներում կատարված փոփոխությունների արդյունքում տեղ գտած անհամապատասխանությունների հետ կապված անհրաժեշտություն է առաջացել փոխանակության համար քննարկվող 250.8քմ, 250.8քմ և 326.84քմ մակերեսներով հողամասերը փոխարինել համապատասխանաբար 217.65քմ, 221.07քմ և 271.57քմ մակերեսներով հողամասերով, ինչը հնարավորություն կտա ապահովել տվյալ հատվածում կանոնակարգված քաղաքաշինական իրավիճակ:

Հաշվի առնելով վերոգրյալը ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 24-ի հ.հ.355-Ա, 356-Ա և 357-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.Հ.355-Ա, 356-Ա ԵՎ 357-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 24-ի հ.հ.355-Ա, 356-Ա և 357-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.Հ.355-Ա, 356-Ա ԵՎ 357-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի հունիսի 24-ի հ.հ.355-Ա, 356-Ա և 357-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ